

ՀՈՎԷ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԱՆՔՐԱԽՈՒՐ

ՌԱԿԱՆԵՆԵՐ



ՀԱՅՊԵՏՐԱՏ




ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Չիքսիսի  
վանքառարարներ

A II  
30597

4-533



ՏՄԱՏՏՆԵՆՏ



Նկարները՝ Գ. ԵՐԻՑՅԱՆԻ




**ՕՎ, ԿՄԱՆԻԱ**  
**ՈՒ ԱԴԱՇԼԻՎԻԿԱՆ ԿՄՈՒՅԻ**

(Ու արմանկոմ յազկե)  
Արմգիզ, Երևան, 1949 ց.


Մի օր Չրղըիկն ու Ճայն եկան  
Թե՛ եկ դառնանք վաճառական:  
Ասին ու խելք խելքի տրվին,  
Հավան կացան, պայման դրրին.  
Բայց՝ արի տես... որ փող չունեն:  
Շատ միտք արին, թե ինչ անեն.  
Վերջը եկան Փրշի մտառ,  
Ընկան նրրա ձեռն ու ոտր,  
Ու մուրհակով,  
Շահով, կարգով,




Փող վեր առան բավականին,  
 Ինչքան պետք էր իրենց բանին:  
 Չիղջը մընաց, տընպահ դառավ,  
 Ճայր բոլոր փողերն առավ,  
 Առավ, նստեց նավի միջին,  
 Հասավ Մըսըրը, Չինուամաչին,  
 Փարս, Հընդըստան,  
 Արարըստան ...  
 Է՛լ թանկագին քիրմանի շալ,  
 Է՛լ մարգարիտ, զըմըռուխտ ու լալ,



Հընդու խուրմա, փրստա, բաղամ,  
Եվ... որ մեկի անունը տամ.  
Ինչ որ տեսայ, աչքը սիրեց,  
Առատ-առատ նավը լըցրեց.  
Նավը լըցրեց հազար բարով  
Ու ետ՝ եկած ճանապարհով





Ուրախ-ուրախ տուն էր գալի:  
Ճամփին ծովում սարսափելի  
Ալեկոծում, մըրրիկ ելավ,  
Զարկեց, տարավ ապրանք ու նավ:  
Միայն սովաքյար ճայր էնօր  
Ազատվեցավ մերկ ու տկո՛ր:  
Ազատվեցավ - փառք իր ասծուն,  
Բայց ի՞նչ սըրտով խեղճը դա տուն,  
Գա՛ն - ի՞նչ ասի պարտքատերին,  
Ո՞նց երևա իր ընկերին...  
Ընկերն էնտեղ՝ դուռը կըտրած,  
Աչքը ճամփին, վիզը ծրուած,  
Համրում է օրն օրի վըրա,  
Թե՛ մեր ճայր երբ պիտի դա...  
Երկար նայեց,  
Ճամփեն պահեց,  
Շատ լավ ու վատ երազ տեսավ,  
Մինչև պարտքի օրը հասավ,  
Ու՛ մուրհակի թուղթը ձեռին,  
Փուշը տընկվեց կրտեր ծերին.  
— Է՛յ բարեկամ, ի՞նչ բանի եք.  
Էլ չեք ասում, թե պարտք ունեք...  
Գործ բըռնեցիք, հորըս օղորմի.  
Ետ տըվեք դե փողըս հի՛մի:  
Թուղթ եք տըվել՝ վախտ իմացեք,




Ամոթ, արուռ, ահ ունեցեք...  
 Թալան հո չի՞ ... մեղք եմ ես էլ...  
 Ախպեր, էսպես բան եք տեսել.  
 Ոսկի տա մարդ իրեն ձեռով,  
 Չրկարենա առնի դռնով...  
 Սրանից հետո դե արի դու  
 Ու ձեռ մեկնի աղքատ մարդու...  
 Գողգոթում էր ողջ թառակում,  
 Հայհոյում էր, խայտառակում.  
 Ամեն մարդ էլ, ով որ լրսում,  
 Հենց մի բերան էն էր ասում.  
 — Ա՛յ ամոթ ձեզ, Չրղճիկ ու Ճայ,

Ի՞նչ ենք լրսում.— վայ, վայ, վայ, վայ.  
 Անուաներդ վաճառական  
 Ու էս տեսակ խայտառակ բան ...  
 վայ, վայ, վայ, վայ,  
 Չրղճիկ ու Ճայ...  
 Չրղճիկն էսպես միշտ լրսելիս  
 Միրար բերնով դուրս էր գալիս:  
 Բարկանում էր իրեն մրտքում,  
 Անիծում էր, չրքում, թրքում.  
 — Ա՛յ քու տունը քանդվի, ա՛ Ճայ,  
 Ա՛յ դու դառնաս գրրողի վայ,  
 էս ի՞նչ բան էր, որ դու արիր,  
 Գրլուխս էս ի՞նչ փորձանք բերիր...  
 Ու խրնդրում էր ամեն անգամ.  
 — Մի՛ նեղանա, Փուշ բարեկամ,


Շատ ես կացել,  
 Կաց մի քիչ էլ.  
 Թուղթ ստացա երեկ Ճայից,  
 Թե դուրս եկա Արաբիայից.  
 Որտեղ որ է՝ շուտով կըզա,  
 Իեռ մի բան էլ ավել կըտա...  
 — Ես չեմ ուզում ավելն, ախպեր,  
 Կանխիկ համրած իմ փողը բեր.  
 Շահ եք դըրել,  
 Վախտ եք դըրել.  
 Ինչ գըրած ա, էն եմ ասում,  
 Չեզնից ավել բան չեմ ուզում:  
 — Չէ՛, ադա Փուշ,  
 Թե վաղ, թե ուշ,  
 Փողն իր կարգին, շահն իր կարգին,  
 Իսկ պատիվը... ես իմ հոգին...  
 Ես հույս ունեմ, ասենք պարտք ենք...  
 Բայց չէ՛ ախար, մենք էլ մարդ ենք...  
 Չէ՛, քու արածն ով մոռանա,  
 Իր աստվածն էլ նա կուրանա...  
 Խեղճը էսպես լեզու ածավ,  
 Շատ հույս տրվավ, շատ խոստացավ,  
 Շատ սուտ ասավ պարտքատերին,  
 Շատ ըսպասեց իր ընկերին.  
 Բայց ընկերը չըկան, չըկան:  
 — Էս ի՞նչ ցավ էր, աստված վըկա.  
 Ի՞նչ իմ բանն էր՝ մըտա մեջը,  
 Որ խայտառակ լինեմ վերջը...




Ի՞նչպես պրրծնեմ էս կրրակից,  
էս ահագին պարտքի տակից.  
Էլ ի՞նչ ասեմ,  
Ո՞նց ըսպասեմ.  
Նա ե՞րբ կըգա, ի՞նչ իմանամ,  
Ո՞ր ջուրն ընկնեմ... ո՞ւմ մոտ գընամ...  
Շատ միտք արավ,  
Դեռ դե՛ն թըռավ,  
Ի՞նչ որ ուներ տանը, հագին,  
Ողջ հավաքեց, տըվավ պարտքին,



Յիւի մերկացաւ,  
 էլ չըպրծաւ:  
 Վերջը տեսաւ, որ ճար չեղաւ,  
 Թներ առաւ, ինքն էլ փախաւ,  
 Փախաւ, կորաւ, որ էլ էնպէս  
 Դատարկ, սրնանկ ու սներես,  
 Ոչ պատահի պարտքատերին,  
 Ոչ երևա լույս աշխարհին:  
 Այնուհետև, իր նամուսից,  
 Չըղջիկը՝ մերկ, փախած լուսից,



Ցերեկները դես դեն թաքչում,  
Գիշերն է միշտ մըթնում թրուչում,  
Որ չերևա իր թայ-թուշին,  
Ոչ պարտքատեր աղա-Փուշին:  
Ճայն էլ ծովում,  
Ճրչում, ծրվում,  
Զուրն է մըտնում,  
Դուրս է պըրծնում,  
Թևին տալիս,  
Ման է դալիս,



Թե մի գուցե բախտը բանի,  
Կորուսան էլ եղ ջրից հանի:  
Իսկ Փուշն արդեն հույսը հատած,  
Ճանկ ու ատամ սուր պատրաստած,  
Կողքովն ով որ անց է կենում՝  
Քաշում է փեշն ու հարցընում,  
Թե չե՞ն տեսել մեկն ու մեկին,  
Էն լիրբ ճային կամ ՉրղՂիկին.  
Ու էն օրից մինչև օրս էլ  
Մեկը մեկին դեռ չեն տեսել:



A 3009X

ԳԻՆՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՈՒՄ

Խմբագիր Ն. ԹՈՒՄԱՆՅԱՆ  
Տեխն. խմբագիր՝ Ի. ՎԱՐԴԱՆՅԱՆ  
Գոճօրոյ սրբագրիչ՝ Հ. ԴՈՒՆՅԱՆՅԱՆ

ՎՅ 00936: Պատվեր 920: Տիրած 10000: Տպագրական 1  
Հանձնված է արտադրության 26/IV 1948 թ.  
Ստորագրված է տպագրության 10/III 1949 թ.

Հայկ. ՍՍՏ Մինիստրների Սովետին կից Պոլիգրաֆ և Հրատ.  
I տպարան, Երևան, Լենինի փ. № 65, 1949 թ.:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220030597

[204]

ԳԻՆԸ 2 Ռ.

300

A  $\frac{\text{II}}{30597}$

